ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2019 թվականի N78-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով **Էմիլ Թարխանյանի** 2019 թվականի հունիսի 3-ի հայտը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Մերձավան համայնքի բնակիչ **Էմիլ Թարխանյանին** տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) իրեն սեփականության իրավունքով պատկանող 3-րդ փողոց թիվ 46 հասցեում գտնվող տնամերձ հողամասում հնի քանդումով միահարկ, երկհարկ բնակելի տուն, ավտոտնակ կառուցելու համար:

2. **Էմիլ Թարխանյանը** պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության և քանդման թույլտվություններ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի հունիսի 3

հ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

4 հունիսի 2019 թվականի N79-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՆԱՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ԹԻՎ 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման <<Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին>> 2019 թվականի մայիսի 27-ի ՆԿ-22/05/2019-6-0036 որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 20-ի <<Ինքնակամ կառուցված շինությունները, դրանց պահպանման և սպասարկման համար զբաղեցրած հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու մասին>> N69-Ա որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ բնակելի տան վաճառքի համար հաշվարկված վճարի տարբերությունը հաշվարկել հետևյալ կերպ.

1) 50,58 քառակուսի մետր ավտոտնակը համարել բնակել տան մաս , իսկ բնակելի տան վաճառքի վճարը յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 5 100 ՀՀ դրամ է: Բնակելի տան օրինականացման համար հաշվարկված գումարի տարբերությունը կլինի 50,58 x 3 400=171 972ՀՀ դրամ.

2) 9,37 քառակուսի մետր պահեստը համարել բնակել տան մաս , իսկ բնակելի տան վաճառքի վճարը յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 5 100 ՀՀ դրամ է: Բնակելի տան օրինականացման համար հաշվարկված գումարի տարբերությունը կլինի 9,37 x 1 700=15 929ՀՀ դրամ.

Մերձավան համայնքի վարչական եկամուտների 900325175157 հաշվեհամարին վճարել ինքնակամ շինության օրինականացման համար հաշվարկված գումարի տարբերությունը՝ 187 901ՀՀ դրամ, ուստի 2019 թվականի

մայիսի 22-ին Արտավազդ Վասիլի Հովհաննիսյանի հետ կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում /սեղանամատյան 4917/ , անշարժ գույքի առուվաճառքի գինը՝ << 565 516>>թիվը փոխարինել <<753 417>> թվով:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանում և Արմավիրի նոտարական տարածք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի հունիսի 4

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

6 հունիսի 2019 թվականի N80-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, , Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով՝ ըստ որի կառույցն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ 1962 թվականներին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշմամբ, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների կազմում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, և հիմք ընդունելով շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ ԱՁ <<Կարեն Մաչանյան>> -ի /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ կողմից 2019 թվականի հունիսի 6-ին տրված հողամասի և շինությունների հատակագծերը և 2019 թվականի հունիսի 6-ին Հարություն Հրաչի Դանիելյանի դիմումը, **որոշում եմ.**

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ Հարություն Հրաչի Դանիելյանի (ծնված 15.04.1954թ գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը սեփականության իրավունքով պատկանող 0,0207 հեկտար տնամերձ հողամասի և 184,1 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով օրինական կառուցված շինությունների նկատմամբ:

2.Բնակելի տանը և հողամասին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ համայնք Մերձավան Սևանի փողոց N 61/1.

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի հունիսի 6

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

7 հունիսի 2019 թվականի N81-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով **Էմիլ Թարխանյանի** 2019 թվականի հունիսի 3-ի դիմումը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ **Էմիլ Թարխանյանին** տալ շինարարության թույլտվություն իրեն սեփականության իրավունքով պատկանող 3-րդ փողոց թիվ 46 հասցեում գտնվող տնամերձ հողամասում հնի քանդումով միահարկ, երկհարկ բնակելի տուն, ավտոտնակ կառուցելու համար:

2.Սահմանված կարգով իրականացնել տեղական տուրքի գանձումը:

3.**Էմիլ Թարխանյանը** շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Մերձավան համայնքի ղեկավարին ներկայացնել N2-5 ձևի տեղեկանք:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի հունիսի 7

հ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 հունիսի 2019 թվականի N82-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով **Հասմիկ Հովհաննիսյանի** 2019 թվականի հունիսի 10-ի դիմումը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ **Հասմիկ Հովհաննիսյանին** 2013 թվականի օգոստոսի 20-ին տված N6 շինարարության թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 1 տարի ժամկետով:

2.Սահմանված կարգով իրականացնել տեղական տուրքի գանձումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի հունիսի 10

ի. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 հունիսի 2019 թվականի N83-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանի 2019 թվականի հունիսի 10-ի հայտը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ շենքի տանիքի և սանհանգույցների վերանորոգման համար:

2.Նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի հունիսի 10

ի Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 հունիսի 2019 թվականի N84-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով **Գրիգոր Մեսրոպյանի** 2019 թվականի հունիսի 10-ի հայտը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Մերձավան համայնքի բնակիչ **Գրիգոր Մեսրոպյանին** տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) իրեն սեփականության իրավունքով պատկանող 2-րդ փողոց թիվ 19 հասցեում գտնվող տնամերձ հողամասում բնակելի տուն, անասնագոմ և քարե պարիսպ կառուցելու համար:

2. **Գրիգոր Մեսրոպյանը** պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության և քանդման թույլտվություններ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի հունիսի 10

ք. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merdzavan.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 հունիսի 2019 թվականի N24-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Գնումների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երրորդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի յոթերորդ մասի դրույթներով , **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ սանհանգույցների և տանիքի վերանորոգման աշխատանքները կատարելու համար պատասխանատու ստորաբաժանում սահմանել համայնքապետարանին, իսկ ստորաբաժանման պատասխանատու համարել համայնքապետարանի առաջատար մասնագետ՝ Աշոտ Գրիգորյանին:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ սանհանգույցների և տանիքի վերանորոգման աշխատանքների գնումների համակարգող սահմանել Ցողիկ Ռուդիկի Առաքելյանին:

3. Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացները կազմակերպել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի հունիսի 13
ք. Մերձավան